ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

30.08.2023 Թ. Ք. ԻՋԵՎԱՆ

Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի քննարկում և հաստատում (զեկուցող՝ Վ. Աղաբաբյան):
2. Ֆակուլտետի 2023-24 ուստարվա նախապատրաստական աշխատանքների քննարկում (զեկուցող՝ Վ. Աղաբաբյան):
3. Կիրառական արվեստի ֆակուլտետի գիտական խորհրդի՝ 2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակի աշխատանքային պլանի քննարկում և հաստատում (զեկուցող՝ Վ. Աղաբաբյան):
4. Կիրառական արվեստի ֆակուլտետի՝ 2023-2024 ուսումնական տարվա աշխատանքային պլանի քննարկում (զեկուցող՝ Վ. Աղաբաբյան):

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի պաշտոնակատար, խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց, որ ֆակուլտետի գիտական խորհրդի անդամներին էր ուղարկվել Կիրառական արվեստի ֆակուլտետի գիտական խորհրդի նոր կազմը, որում նախորդի համեմատ առկա են որոշ փոփոխություններ: Գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի ասիստենտ Տիգրան Բագամյանը՝

անձնական զբաղվածությունից ելնելով, խնդրել է իրեն չընդգրկել ֆակուլտետի գիտական խորհրդի կազմում: Նրա փոխարեն առաջարկվել է Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի ասիստենտ Դոնարա Չիբուխչյանի թեկնածությունը: Ֆակուլտետի գիտխորհրդի անդամ 2 ուսանողների փոխարեն, ովքեր նախորդ ուստարում ավարտել են համալսարանը, առաջարկվել են 2-րդ կուրսի ուսանողների թեկնածություններ՝ Լորետա Մխիթարի Խաչիկյանի («Դեկորատիվ-կիրառական արվեստ») և Միլենա Թաթուլի Մնացականյանի («Դիզայն:

Նիստի մասնակիցները հավանություն տվեցին առաջարկված թեկնածուներին:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Կիրառական արվեստի ֆակուլտետի գիտական խորհրդի նոր կազմը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկան խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը Զեկուցողը ներկայացրեց 2023-2024 ուստարվա ամբիոնային և անհատական բեռնվածությունները: Նշվեց, որ ամբողջովին լուծված է դասախոսների և ժամաբաշխման հարցը: Ուսումնական և մասնագիտական պրակտիկաները ևս բաշխված են:

Զեկուցողը նշեց, որ դասախոսները պետք է սեղմ ժամկետում ամբիոն ներկայացնեն առարկայական փաթեթները: Զեկուցողները նշեցին, որ առաջիկայում դասախոսները պետք է իրենց դասընթացների ուսումնական պլանները, ուսումնական նյութերն ու առաջադրանքները, հարցաշարերը, ինքնուրույն աշխատանքների թեմաներն ու անհրաժեշտ գրականության ցանկը զետեղեն ուսուցման էլեկտրոնային կառավարման e-lerning.am հարթակում: Նրանք դասախոսներին հորդորեցին ժամանակ չկորցնել և զբաղվել դասընթացների փաթեթների կազմմամբ՝ հետևելով առկա մեթոդական նյութերին: Զեկուցողները նաև նշեցին, որ ֆակուլտետում ունեն նոր պրոֆեսոր՝ Նունե Յուրիի Աղբալյանը, ով պարապելու է «Հետազոտության պլանավորում և մեթոդներ»

առարկան և Աշոտ Արարատի Շահինյանը, ով պարապելու է «Մետաղի գեղարվեստական մշակում» առարկան: Զեկուցողը ամբիոնին հորդորեց լրացուցիչ աշխատանքներ իրականացնել նոր դասավանդողների հետ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Մ. Ստեփանյանը, Ք. Մխիթարյանը, Ա. Չիբուխչյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երրորդ հարցի մասին զեկուցող Վ. Աղաբաբյանը ներկայացրեց ֆակուլտետի գիտական խորհրդի 2023-24 ուստարվա I կիսամյակի աշխատանքային պլանը, որտեղ ըստ ամիսների ներակայացված են այս ուստարվա 1-ին կիսամյակի ուսումնական գործընթացի հետ կապված հիմնական աշխատանքներին վերաբերող հարցեր: Գիտխորհրդի անդամների կողմից կատարվեցին աշխատանքային պլանի որոշ դրույթների փոփոխության վերաբերյալ առաջարկություններ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ք. Մխիթարյան, Հ. Ասատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ֆակուլտետի գիտական խորհրդի 2023-24 ուստարվա I կիսամյակի աշխատանքային պլանը՝ առաջարկված փոփոխություններով հանդերձ, ներկայացնելու տնօրենության հաստատմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի չորրորդ հարցի մասին զեկուցող Վ. Աղաբաբյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի՝ 2022-2026 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի պահանջներից ելնելով՝ կազմվել է ֆակուլտետի՝ 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի աշխատանքային պլանը, որի ձևաչափը մշակվել է Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից: Աշխատանքային պլանում հստակ ներկայացված են ռազմավարական խնդիրները և գործողությունները՝ իրենց կատարման ժամկետներով, պատասխանատուներով, համագործակցողներով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Մ. Ստեփանյանը, Ք. Մխիթարյանը, Ա. Չիբուխչյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ֆակուլտետի 2023-24 ուստարվա աշխատանքային պլանը ներկայացնելու տնօրենության հաստատմանը:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ *Վ. Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ*

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ *Ք. Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ*